ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1999 թվականի հուլիսի 23–ի թիվ 1618/1999 (ԵՀ) ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Բիզնեսի կառուցվածքային վիճակագրության որակի գնահատման չափորոշիչների վերաբերյալ
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով վերջին անգամ թիվ 410/98 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգով (2) փոփոխված՝ Խորհրդի 1996 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 58/97 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգը (1) «Բիզնեսի կառուցվածքային վիճակագրության մասին» և, մասնավորապես, դրա 12(vi) հոդվածը,

1) քանի որ թիվ 58/97 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգը սահմանում էր Համայնքում ձեռնարկատիրության կառուցվածքի, գործունեության, մրցունակության և ձեռնարկատիրական գործունեության իրականացման վերաբերյալ Համայնքի վիճակագրության կազմման ընդհանուր շրջանակը,

2) քանի որ Հանձնաժողովը նշված վիճակագրության և, մասնավորապես, դրա որակի և բիզնեսի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ,

3) քանի որ անհրաժեշտ է, որպեսզի Հանձնաժողովը սահմանի բիզնեսի կառուցվածքային վիճակագրության որակի գնահատման չափորոշիչները,

4) քանի որ սույն Կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են Վիճակագրական ծրագրերի կոմիտեի կարծիքին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Թիվ 58/97 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգի 7-րդ հոդվածում նշված՝ որակի գնահատման չափորոշիչները սահմանվում են սույն Կանոնակարգի հավելվածում:

Հոդված 2

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և բոլոր անդամ պետություններում գործում է անմիջականորեն:

(1) ՊՏ L 14, 17.01.1997թ., էջ 1:
(2) ՊՏ L 52, 21.02.1998թ., էջ 1:

Կատարված է Բրյուսելում, 1999 թվականի հուլիսի 23-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Իվ-Թիբո Դե Սիլգի

Հանձնաժողովի անդամ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Մաս 1

Նպատակները

Սույն հավելվածի նպատակը բիզնեսի կառուցվածքային վիճակագրության որակի գնահատման համար ընդհանուր շրջանակ ստեղծելն է, որը Եվրոպական համայնքի մակարդակով կազմվում է տարեկան կտրվածքով բիզնեսի կառուցվածքային վիճակագրության վերաբերյալ թիվ 58/97 (ԵՀ) կանոնակարգի շրջանակներում (այսուհետ՝ ԲԿՎ կանոնակարգ):

Մաս 2

Գործունեության ոլորտը

1. Ստորև նշված որակական ցուցանիշները և զեկույցները պետք է կազմվեն ԲԿՎ կանոնակարգի 1-ին հավելվածի 3-րդ մասով նշված գործունեության բոլոր տեսակների համար՝ Հանձնաժողովի թիվ 2699/98 (1) (ԵՀ) կանոնակարգով սահմանված շեղման համաձայն:

2. Սույն հավելվածում ներկայացված տեղեկատվությունը սույն Կանոնակարգի նպատակներով չպետք է հրապարակվի անդամ պետության կողմից, եթե անդամ պետության ուղղակի ծախքերից ավելացված արժեքի ընդհանուր գումարը սովորաբար չի գերազանցում Եվրոպական համայնքի համապատասխան ցուցանիշի մեկ տոկոսը: Նշված շեմը կիրառվում է Եվրոպական համայնքում Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (NACE Rev. 1) յուրաքանչյուր գործունեության նկատմամբ, որի համար պահանջվում է որակական ցուցանիշ կամ զեկույց ներկայացնել:

Մաս 3

Առաջին բազային տարին

Առաջին բազային տարին, որի վերաբերյալ սույն հավելվածով սահմանված տեղեկատվությունը պետք է ներկայացվի, 1997 օրացուցային տարին է: Եթե 4-րդ մասի, 2-րդ պարբերությամբ սահմանված տեղեկատվության փոխանցման գործընթացի հետաձգման ընթացքում սույն հաշվետու տարվա համար տեղեկատվությունն առկա չէ, ապա օգտագործվում է 1997 հաշվետու տարվան ամենամոտ տարվա տեղեկատվությունը:

(1) ՊՏ L 344, 18.12.1998թ., էջ 1:

Մաս 4

Տեղեկատվության փոխանցումը

1. Սույն հավելվածով սահմանված որակական ցուցանիշները և զեկույցները պետք է ներկայացվեն բազային ժամանակաշրջանի օրացուցային տարվա վերջից հետո 24 ամիսների ընթացքում:

Տվյալ փոխանցման ժամկետը կարող է երկարաձգվել Հանձնաժողովի թիվ 2699/98 (ԵՀ) կանոնակարգով թույլատրված ցանկացած երկարաձգման լրացուցիչ ժամանակահատվածին հավասար ժամկետով այնքանով, որքանով լրացուցիչ երկարաձգումը վերաբերում է սույն հավելվածի 5-րդ մասով նախատեսված բնութագրիչին:

2. Որակական ցուցանիշները (5-րդ մաս, 1–ին, 2–րդ, 3–րդ և 4–րդ կետեր) և զեկույցներն առաջին անգամ տրամադրվում են մինչև 1999 թվականի դեկտեմբեր ամսվա վերջը:

Մաս 5

Որակական ցուցանիշներ. վարիացիայի գործակից և չարձագանքելու հաճախականությունը

Անդամ պետությունները տրամադրում են ստորև նշված բնութագրիչների, ակտիվության մակարդակների և շարքերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ բազային տարում թույլատրված ցանկացած շեղմանը համապատասխան:

Ստորև նշված յուրաքանչյուր շարքի, բնութագրիչի և ակտիվության մակարդակի մասով անդամ պետությունները հաշվետու են վարիացիայի ընդհանուր գործակցի վերաբերյալ՝ հաշվի առնելով (կախված հետազոտության կառուցվածքից) չարձագանքելու հաճախականությունը, դասակարգման սխալները և, հարկ եղած դեպքում, վիճակագրական ընտրանքի սխալը:

Վարիացիայի գործակիցը գնահատման ֆունկցիայի դիսպերսիայի քառակուսի արմատի հարաբերությունն է ֆունկցիայի մաթեմատիկական սպասմանը:

1. Շարք 1A (ձեռնարկությունների տարեկան վիճակագրություն)

- վեց բնութագրիչ (11 11 0; 12 11 0; 12 15 0; 13 31 0; 15 11 0; 16 13 0),

- ԲԿՎ կանոնակարգի 1-ին հավելվածի 9-րդ մասով նշված Եվրոպական համայնքում Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (NACE Rev. 1). գործունեության տեսակների եռանիշ մակարդակ (խմբեր) կամ վերախմբավորումներ:

2. Շարք 1B (ձեռնարկությունների տարեկան վիճակագրություն՝ խմբավորված ըստ ձեռնարկությունների չափի)

- երեք բնութագրիչ (11 11 0, 12, 11 0, 12 15 0)

- ԲԿՎ կանոնակարգի 1-ին հավելվածի 9-րդ մասով նշված Եվրոպական համայնքում Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (NACE Rev. 1). գործունեության տեսակների եռանիշ մակարդակ (խմբեր) կամ վերախմբավորումներ և վերախմբավորումներ ըստ ձեռնարկությունների չափի հետևյալ դասակարգմամբ՝ 1-19; 20-249; 250-999; 1000 և ավելի:

3. Շարք 1C (տարածաշրջանային տարեկան վիճակագրություն)՝

- երկու բնութագրիչ (11 21 0; 13 32 0)

- Եվրոպական համայնքում Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (NACE Rev. 1). գործունեության տեսակների երկնիշ մակարդակ (բաժանումներ) և Վիճակագրության համար տարածքային միավորների դասակարգում (NUTS 2):

4. Վիճակագրական միավորի չարձագանքելու դեպքը

- Անդամ պետությունները ներկայացնում են ԲԿՎ կանոնակարգի 1-ին հավելվածի 9-րդ մասով նշված՝ Եվրոպական համայնքում Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (NACE Rev. 1). գործունեության տեսակների եռանիշ մակարդակով կամ վերախմբավորումներով վիճակագրական միավորի չարձագանքելու հաճախականությունը:

5. Վիճակագրական տարրի չարձագանքելու հաճախականությունը

Անդամ պետությունները ներկայացնում են վիճակագրական տարրի չարձագանքելու հաճախականությունը՝ համաձայն ԲԿՎ կանոնակարգի 1-ին հավելվածի 9-րդ մասում նշված Եվրոպական համայնքում Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (NACE Rev. 1) գործունեության տեսակների եռանիշ մակարդակի կամ վերախմբավորումների, 12 11 0, 12 15 0, 13 31 0, 15 11 0, 16 13 0 բնութագրիչների համար:

Մաս 6

Հատուկ զեկույցները

Անդամ պետությունները ներկայացնում են ստորև նշված երկու հատուկ զեկույց:

1. Հետազոտության ռազմավարությունը

Սույն զեկույցում պետք է առնվազն նշվի ձեռնարկությունների յուրաքանչյուր ենթախմբի համար մարդահամարի տվյալներ կամ ընտրանք կիրառելու, ինչպես նաև վարչական ռեսուրսներ կամ վիճակագրական հարցումներ կիրառելու մասին:

2. Հիմնական գործունեությունը

Սույն զեկույցում պետք է նշվի, թե ինչպես է որոշվում այն դիտարկվող օբյեկտների հիմնական գործունեությունը, որոնք, ԲԿՎ կանոնակարգի դրույթների համաձայն, հավաքագրում են Եվրոստատին փոխանցվող արդյունքները: Մասնավորապես, տեղեկություններ պետք է տրամադրվեն դիտարկվող օբյեկտների հիմնական գործունեության փոփոխման պարբերականության վերաբերյալ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե արդյոք այն ընդգրկված է վիճակագրական հետազոտության, թե վարչական փաստաթղթերի մեջ:

Մաս 7

Եվրոստատի կողմից տվյալ պետության՝ որակին վերաբերող տվյալների տարածումը

Առանց անդամ պետության համաձայնության՝ տվյալ երկրի՝ որակին վերաբերող ոչ մի տվյալ չպետք է հրապարակվի:

Մաս 8

Անցումային ժամանակաշրջանը

5-րդ մասի 5–րդ կետով սահմանված տեղեկատվությունը պարտադիր չէ առաջին երկու բազային տարվա, հատկապես 1997 և 1998 թվականների համար: